

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**ՅԱՐՈՒԹԻՒՆ, ՔԱՐՈՋՈՒԹԻՒՆ, ՀԱԼԱԾԱՆՔ**

Սուրբ Յարութեան Տաճարի Հայոց զանգերը դարձեալ յաղթութեան ղօղանջներով կ'աւետեն մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Ս. Յարութեան տօնը, իբրեւ մեծագոյնը Քրիստոնէական տօներուն եւ ի մասնաւորի այն հաւատքին, որ պիտի փշրէր անյուսութիւնն ու թերահաւատութիւնը այն նորագարձներուն, որոնք յուսալքուած վերագարձեր էին Գողգոթայի բարձունքէն: Աստուածորդւոյն հետ երեք տարիներու դժուարին քարոզութիւններէ եւ զարմանալի հրաշագործութիւններէն ետք, դժուար թէ Անոր հետեւորդները կարողանային հաւատալ իրենց Վարդապետին այնքան անփառունակ վախճանին: Ովսանաներուն յաջորդեր էին շարչարանքը եւ հալածանքը Արդարութեան Արեգակին: Սիրոյ քարոզիչը ատելութեան զոհ դարձած էր եւ խաւարի ասպետները դարձեալ իրենց սադրանքներով յաջողեր էին, բայց վերջին անգամի մը համար:

Այս խորհրդածութիւնները սակայն կարճատեւ ընթացք մը ունեցեր էին Իւղաբեր Կանանց ու անոնց մտերիմներուն համար, երբ խաչելութեան երրորդ օրը դատարկ գրտեր էին այն գերեզմանը, որուն այցելութեան փափաքեր էին երթալ՝ այնքան տրտում յիշատակներով եւ անցեալի անմոռանալի յուշերով:

Հրաշք մը պատահած էր, Քրիստոս Յարութիւն առած էր:

Այդ մեծ ու աննախընթաց իրողութենէն ասդին՝ Յարութիւնը դարձաւ նոր հաւատքին յարածածան դրօշը, որուն ներքեւ կը մղուէր սրբազան պայքարը Քրիստոնէութեան գոյատեւումին: Դրօշ մը, որ հպարտօրէն իրենց ձեռքերուն մէջ բռնեցին Աւետարանին անվախ ու եռանդուն ջահակիրները: Եւ ուրիշ հազարաւորներ ալ՝ փորձեցին կրօնահալած վարմունքով անպատուել ու պատռել զայն: Աւելի ուշ՝ Ներոններ, Դիոկղետիանոսներ եւ հաւատքի հալածիչներ՝ հուրով ու սուրով առաջնորդեցին Յարուցեալին աշակերտներն ու հետեւորդները ամենէն շարչարալից ու քստմնելի մահուան:

Այսօր ալ եկեղեցամարտ ուժերու կողմէ բազմահնար կերպերով, խօսքով ու գրով կը շարունակուին հալածանքները ճշմարտութեան դէմ, որոնք կը ջանան լպիրշ հրատարակութիւններով ու հրապարակումներով անհետացնել Յարուցեալին լուսաճաճանչ հետքերը երկրի երեսէն, վարկաբեկել Քրիստոսի Եկեղեցին եւ Անոր լոյսը տարածող հոգեւորականները: Բայց բոլոր ժամանակներու քրիստոսանուէր սերունդները իրենց հաւատքի հաւատարմութիւնը եւ ուժը կը պահեն եւ հոգեկան բարձրագոյն պատնէշներու վրայ կը ցուցաբերեն իրենց զոհաբերութեան անբեկանելի մատուցումները:

Երկու հազար տարի առաջ, եթէ չարագործ մարդիկ խաչեցին Քրիստոսը եւ կը շարունակեն մերօրեայ անաստուածները կրկին խաչել Զայն, ի՞նչ անուն կրնանք տալ այն հայակործան, սրբադաւ ուժերուն, որոնք եկեղեցի-պետութիւն յարաբերութիւնները կը վտանգեն ներքին խլրտումներով, շարունակական հակաեկեղեցական ամօթալի արշաւներով, հայհոյախառն, անվայել խօսույթներով յախուռն հրապարակումներով՝ սքօղուած կեղծ սրտացաւութեան հիմնաւորումներով:

Անոնք, որոնք դաւադիր գործունէութեան լծուած են Մայր Եկեղեցւոյ դէմ եւ կը պայքարեն առաւել վտանգել՝ արդէն իսկ վտանգուած ժողովուրդին ապահովութիւնը, Փրկչին յարութեան հրաշքը՝ պաղ ու պարզ դէպքի մը արձագանգը կը բերէ անոնց ականջին:

Ամենաթողութիւնն այն աստիճան վարագուրած է անոնց ներքին եւ արտաքին տեսողութիւնը, որ չեն նկատեր ահաւոր թշնամին, որ մղոն մը հեռուէն գոհունակութեամբ, լկտի ժպիտով կը դիտէ ու կը լրտեսէ իրենց հայրենաքանդ շարժումները եւ կը սպասէ անշուշտ, որ լաւագոյն պատեհութեամբ վճռական յարձակում ձեռնարկէ եւ մեր ժողովուրդին Արցախեան վերջին պատերազմի եւ անոր կորուստի տառապանքը դարձնէ առաւել ողբերգական:

Որքան ալ Քրիստոսի հետեւորդները երկար դարերու ընթացքին ծաղրուեր ու հալածուեր են, ճշմարտութիւնը իր անվհատ պայքարը շարունակեր եւ մնացեր է իր դիրքերուն վրայ անառիկ ու յաղթական: Մերօրեայ անաստուածները կ'ուզեն նսեմացնել ազգային կեանքէն ներս եւ միջազգային շրջանակներու մէջ յարգանք վայելող Հայոց Եկեղեցւոյ հեղինակութիւնը, լռեցնել Եկեղեցւոյ ձայնը եւ նուազեցնել անոր հանրային ազդեցութիւնը: Որքան ալ սակայն անհաւատութեան հողմերը սաստկաշունչ փչեն ու սուլեն, Յարութեան արեւափառ լոյսը տիեզերական տարածքով պիտի ջահաւորէ հոգիները Աւետարանական ճշմարտութիւններով:

Յարութեան վարդապետութիւնը քրիստոնէական մեր հաւատքի հիմքն ու էութիւնն է, քանզի «Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւն մեր, ընդունայն են եւ հաւատք ձեր» (Ա. Կորնթ. 15:14): Հրաշափառ Յարութեամբ Աստուածորդին լրումին հասցուց փրկագործական Իր առաքելութիւնը: Ի դիմաց մեղքի խաչուեցաւ ինքը՝ Անմեղը, որպէսզի յարատեւ նորոգուի Աստուածակերպ պատկերը խաթարուած մեր հոգիի: Քրիստոս աշխարհ եկաւ իբրեւ Սէր ու սէր սերմանեց, ողորմութիւն ուսուցանեց, հաշտութիւն դարձաւ եւ խաղաղութիւն ու կեանք պարգեւեց, քանզի Ինքն իսկ է Յարութիւն եւ կեանք: Արդ, Քրիստոսի խաչով ներուած են մեզ մեր մեղքերը ու Անոր Յարութեամբ՝ լուսաւորուած առ Աստուած մեր ճանապարհը:

Եկէք Քրիստոսի թափուր Գերեզմանէն դուրս բերուած Յարութեան լոյսէն սիրտ առնենք հաւատալով՝ թէ մարդկութեան այս ահաւոր խաչելութենէն ետքը՝ պիտի գայ Խաղաղութեան, Եղբայրութեան եւ Սիրոյ մեծ Զատիկը, եւ այդ յոյսով գօտեպնդուած ողջունենք զիրար ըսելով.

**Քրիստոս Յարեաւ ի Մեռելոց,
Օրհնեալ է Յարութիւնը Քրիստոսի**